« ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Բառապաշարի հարստացման ուղղությամբ տարվող աշխատանքները տարրական դասարաններում

ԱՌԱՐԿԱ Մայրենի
ՀԵՂԻՆԱԿ Նազիկ Հովեյան
ՄԱՐԶ Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ <<Շ.Շահամիրյան >> կրթահամալիր

Բովանդակություն

Ներածություն.....2

Հասկացություն բառապաշարի և բառապաշարի հարստացման մասին տարրական դասարաններում.....3

Բառապաշարի հարստացման աշխատանքի տեսակները տարրական դասարաններում.....6

Բառապաշարի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքի մեթոդիկա տարրական դասարաններում.....9

Հոմանիշների ու հականիշների ուսուցումը տարրական դասարաններում որպես բառպաշարի հարստացման միջոց 11

Դարձվածքների ու ասացվածքների ուսուցումը տարրական դասարաններում որպես բառապաշարի ու խոսքի հարստացման միջոց...12

Խաղերի դերը տարրական դասարաններում սովորողների բառապաշարի հարստացման գործում 13

Խաղի նշանակությունը տարրական դասարաններում.....14

Խաղի մեթոդաբանությունը տարրական դասարաններում.....15

Եզրակացություն.....17

Գրականությանցանկ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մայրենի լեզվի բառերը մենք զգում ենք, ապրում, իսկ օտար լեզվինը՝ սովորում, հասկանում, հիշում…

Ավետիք Իսահակյան

Թեմայի արդիականությունը- Սովորողների բառապաշարի հարստացման խնդիրը համարվում է խոսքի զարգացման գլխավոր տարրերից մեկը, ուստի ժամանակակից կրթության ոլորտում բառապաշարի համալրման աշխատանքը ունի բարձր նշանակություն : Երեխայի խոսքի զարգացումը եղել և մնում է մայրենի լեզվի գերագույն նպատակներից մեկը: Առանց հարուստ ու գործուն բառապաշարի չի կարող լինել պատկերավոր, գեղեցիկ և դիպուկ խոսք: Ահա թե ինչու ընտրված թեման միշտ էլ արդիական է:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել մեթոդական նյութերը և առանձնացնել սովորողների բառապաշարի հարստացման գործընթացին նպաստող առավելագույն արդյունավետ ուղիները:

Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության **առարկան** հանդիսանում է սովորողների բառապաշարի համալրման աշխատանքների իրականացումը: Ուսումնասիրության **առարկան**տարրական դասարաններում սովորողների բա ռապաշարի հարստացման գործընթացի արդյունավետությունն ապահովող մեթո դական համակարգն է:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Վեր հանել բառակազմական վերլուծության և բառակազմական կաղապարների կիրառման դերը բառապաշարի հարստացման գործում:
2. Առանձնացնել բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրները: 3. Բացահայտել բառակազմական բաղադրիչների միջոցով բառիմաստի բա ցատրության դերը բառապաշարի հարստացման ինչպես նաև խոսքի զարգացման գործընթացում:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ուսումնասիրության մեջ կատարված տեսական և գործնական վերլուծությունները, դասակարգումները կարող են նպաստել կրտսեր դպրոցում

մայրենի լեզվի դասերին բառապաշարի հարստացման գործընթացն առավել արդյունավետ և բազմազան կազմակերպելուն:

1. Հասկացություն բառապաշարի և բառապաշարի հարստացման մասին

Բառապաշարը պատմական կարգ է, և լեզվի զարգացման ընթացքում այն անընդհատ փոփոխվում է, զարգանում: Ժամանակակից հայերենի բառապաշարի զարգացումն իրականանում է տարբեր ուղիներով: Դրանցից են բառաբարդումը, ածանցումըև փոխառությունները: Հայերենի բառապաշարը մայրենի լեզվի մեջ մտնող բառերի ամբողջությունն է: Հայերենի բառերի քանակը հատում է 350 հազարի սահմանը:

Հայերենի բառապաշարն ըստ ծագման բաժանվում է մի քանի շերտերի: Գլխավոր շերտը բնիկ հայերեն բառերն են: Բնիկ հայերեն համարվում են այն բառերը, որոնք եղել են հայերենում, որպես ժառանգություն ստացվել են մայր լեզվից՝ հնդեվրոպական նախալեզվից ու հայերենին ձուլված լեզուներից կամ դրանց հիման վրա ինչ-որ ժամանակ առաջացել են հենց հայոց լեզվի ներսում:

Հայերենի բառապաշարը ժամանակի հետ փոփոխությունների է ենթարկվել, եղել են բառեր, որ հնում կիրառվել են, սակայն հետո անտեսվել են կամ դուրս մղվել այլ բառերի կողմից: Շատ բառեր գործածվել են միջին հայերենում կամ հայերենի բարբառներից որևէ մեկում, կամ մի քանիսում: Այդպիսի ժամանակային ու տարածքային սահմանափակում ունեցող բառերը երբեմն գործածվում են ժամանակակից հայերենում՝ իբրև փոխառություններ գրաբարից, բարբառներից կամ միջին հայերենից : Դրանք այսպես կոչված ներքին փոխառություններն են: Լինում են նաև արտաքին փոխառություններ, այսինքն՝ այնպիսի բառեր, որ հայոց լեզվին են անցել ուրիշ լեզուներից: Օրինակ՝ գրամ, ջազ, մետր, կիլոգրամ, մղոն տոմս, գազ, մզկիթ, հերոս, մետաղ և այլն: Այն արտաքին

փոխառությունները, որոնք ունեն հայերեն համարժեքներ, կոչվում են օտարաբանություններ: Օտարաբանությունների գործածությունը, որպես կանոն,

մերժելի է: Օրինակ՝ օտարաբանություններ են բդեշխ, կոմպյուտեր, ասիստենտ, ստադիոն, նովել,

սալաթ, պոմիդոր, մասսա բառերը, քանի որ կան հայերեն կուսակալ, համակարգիչ, ընթերակա, մարզադաշտ, նորավեպ, աղցան, լոլիկ, զանգված բառերը, որ նույն իմաստներն ունեն, նույն բանն են նշանակում: Մինչդեռ գազ, մզկիթ, մետր, մղոն, ջազ, գրամ, մետաղ բառերը, թեև ուրիշ լեզուներից են փոխառված, սակայն օտարաբանություն չենք համարում, քանի որ դրանց փոխարինող հայերեն բառեր չկան:[5, էջ 137]

Ռուս հայտնի հոգեբան Լ. Վիգոտսկին [6, էջ 10] բառի ու մտածողության քննարկման ժամանակ հանգում է այն հետևությանը, որ բառերը օբյեկտիվ իրականությունը վերարտադրում են ընդհանրացումների, իսկ այդ ընդհանրացում հասկացություններն էլ բառային կաղապարի տեսքով և արտահայտում մեր տեսակետը որևէ երևույթի կամ առարկայի մասին:

Փորձելով պատասխանել այն հարցին, թե ինչ է բառը, Վիգոտսկին ասում է [6 էջ 11-12], որ բառը և՛ խոսք է, և՛ մտածողություն միաժամանակ, որովհետև բառը խոսքային մտածողության միավորն է: Շարունակելով իր միտքը՝ Վիգոտսկին ասում է, որ մեզ հետաքրքրող հարցի (մտածողության ու լեզվի հարաբերակցության) հետազոտության ժամանակ պիտի կիրառվի իմաստաբանական (սեմանտիկական), այսինքն՝ բառի իմաստային կողմի վերլուծությունը, բառի նշանակության բացահայտման մեթոդը: Ուսումնասիրելով բառ-միավորի կառուցվածքը, գործառույթները ու զարգացումը՝ մենք կարող ենք տեղեկանալ լեզվական մտածողության բնույթի մասին:

Լ. Ս. Վիգոտսկին իրավացիորեն նշում է[6 էջ 13], որ թե՛ լեզվի հաղորդակցական ու մտավոր-ինտելեկտուալ գործառույթների, թե՛ մտածողության համար որպես միավոր ծառայում է բառի իմաստը: Հաղորդակցումը, որը հիմնված է գիտակցված հասկացման, մտքերի և ապրումների փոխանակման վրա, անպայմանորեն պահանջում է համակարգված միջոց, որի կատարյալ տեսակը հանդիսանում է մարդկային խոսքը: Հաղորդակցման մեջ բառը հիմնականում խոսքի արտաքին կողմի կրողն է: Սրանով հանդերձ՝ մանկական տարիքում

հաղորդակցության, ընկալման գործընթացի ու դրանց զարգացման խնդրի առավել մանրակրկիտ ուսումնասիրությունը հետազոտողներին հանգեցրել է

այլ եզրակացության: Պարզվում է, ինչպես հնարավոր չէ հաղորդակցվել առանց նշանների օգնության, այնպես էլ շփումն անհնարին է առանց բառի նշանակության և իմաստի ընկալման: Դիմացի մարդուն ինչ-որ ապրում, միտք հաղորդելու համար անհրաժեշտ է հաղորդվող բովանդակությունը հայտնի որևէ դասի կամ երևույթների խմբի մեջ

առնել, որը պահանջում է ընդհանրացում: Այսպիսով՝ մարդուն բնորոշ հոգեբանական բարձրակարգ շփումը հնարավոր է դառնում շնորհիվ այն բանի, որ մարդը մտածողության միջոցով իրականությունն արտացոլում է ընդհանրացված կերպով: Վիգոտսկիին օրինակ է բերում, թե ինչպես մի մարդ ուզում է դիմացինին հաղորդել, որ ցուրտ է: Սա հնարավոր է միայն այն դեպքում, երբ այդ ապրումը հաղորդելու համար մտքում կատարում է որոշակի ընդհանրացում և հայտնում իր վիճակը կամ զգացածը: Այստեղ հարցն այն չէ, որ բացակայում են համապատասխան բառերը կամ հնչյունները, այլ այն, որ թերի են համապատասխան հասկացությունները ու ընդհանրացումները: Գրեթե միշտ անհասկանալի է ոչ թե բառը, այլ այն հասկացությունը, ինչն արտահայտվում է բառի միջոցով: Բառը միշտ էլ պատրաստ է, եթե պատրաստ է հասկացությունը: Այդ պատճառով էլ բոլոր հիմքերը կան բառի նշանակությունը քննելու ոչ միայն որպես խոսքի և մտածողության, այլ որպես ընդհանրացման ու հաղորդակցման միավորի [6, էջ 17-19]:

Դպրոցի ողջ երեք աստիճաններում կարելի է հանդիպել բառի և առարկայի նույնական ընկալմանը, սովորողը տարբերություն չի տեսնում բառի ու դրանով արտահայտված հասկացության միջև: Գ. Բրուտյանը օրինակ է բերում ռուս գրող Կոռնեյ Չուկովսկուց, որը նկարագրում է մի դեպք, երբ երեխան չի տարբերում բառը ու դրանով արտահայտված առարկան: Բառերի ու իրերի նույնացումը ժամանակակից հասարակության մեջ տեղի է ունենում բավարար ինտելեկտեուալ զարգացում չունեցող մարդկանց մոտ, ընդհակառակը, կուլտուրական մակարդակի զարգացումով զարգանում է 20քննադատական վերաբերմունքը դրա նկատմամբ [1, էջ 99]:

Այսինքն՝ մայրենի լեզվից (կամ այլ լեզվից) բառ ուսուցանել նշանակում է

աշակերտին վարժեցնել տեսնելու ու ընկալելու ամեն բառի հետևում թաքնված պատկերը և դրա ընդհանրացնող նշանակությունը: Իսկ այսպիսի ուսուցումը կրթում է մարդու միտքն ու հոգին միաժամանակ, զարգացնում է նրա

քննադատական ու տրամաբանական մտածողությունը:

Հոգելեզվաբաններն և հոգեբանները ապացուցել են, որ բառը մեծ ներգործություն ունի մարդու վարքի վրա: Մայրենի լեզու ուսուցանել նշանակում է մարդուն ցույց տալ բառի հզոր ուժը՝ սեփական վարքը կարգավորելու առումով: Սովորողը պիտի կարողանա որոշակի բառերով ղեկավարել իր մտքերը, ինքն իրեն հրահանգներ տալ ու դրանով հաղթահարել սեփական վախը, տագնապը, անհանգստությունը,

զսպել զայրույթը, որը այսօրվա համագործակցային հիմունքներով առաջնորդվող հասարակության համար առաջնային խնդիր է: Այդ է պատճառը, որ նյարդալեզվաբանական ծրագրավորման ներկայացուցիչները իրենց փորձարկումներում,ինչպես նաև պրակտիկ աշխատանքի արդյունքում ցույց են տալիս բառի, ասել է թե խոսքի հզոր ազդեցությունը սեփական վարքագծի ղեկավարման առումով :

2. Բառապաշարի հարստացման աշխատանքի տեսակները

Բառապաշարի հարստացման ուղղությամբ կազմակերպվող աշխատանքի ընթացքում կարելի է գործածել նյարդալեզվաբանական ծրագրավորման (NLP) ներկայացուցիչների առաջարկած մի քանի տարբերակներ: Հոգեբանական այս ուղղության մերկայացուցիչները առաջարկում են բառի ուսուցման ընթացքում հենվել ոչ թե երեխայի մեխանիկական հիշողության վրա, այլ գնալ բառի ու հասկացության միջև սերտ կապեր հաստատելու ուղիով:[7, էջ 102-104]

Մեխանիկական մտապահումից դանդաղորեն անցնում է կատարվում դեպի պատկերային-զգացական ոլորտ, սովորողին մղում ենք բառի հետևում տեսնելու դրա գունեղ ու վառ պատկերը, լսելու իր ներսից բարձրացող ձայները, նկարագրելու սեփական զգացողությունները: Այս դեպքում սովորողը ոչ թե

պարզապես այդ բառերը կգործածի բառակապակցությունների կամ նախադասությունների մեջ, այլ կվերարտադրի իր մտքում ծնված պատկերները, կբնութագրի լսած ձայները, կարտահայտի մարմնական զգացողությունները:

Այսինքն՝ բառ սովորելով հանդերձ՝ սովորողը զգայական ընկալման արդյունքում ծնված ու մտքում ձևավորված պատկերներն վերարտադրում է կապակցված խոսքի միջոցով:

Օրինակ՝ ուսուցիչը աշակերտին վարժեցնում է բառն ընկալելու տեսողությամբ, լսողությամբ ու շոշափելի-առարկայական զգացողությամբ: Նա սովորողներին առաջարկում է աչքերը փակել, ապա արտասանում է ցանկացած բառ, ասենք՝ ջուր բառը մեկ-երկու անգամ: Հետո դիմում է նրանց:

Քայլ առաջին. տեսողական (վիզուալ) ընկալման խթանում.

Ուսուցիչ - Ի՞նչ պատկեր է ծնվում քո մտքում, երբ լսում ես ջուր բառը:

Ա աշակերտ - Ես տեսնում եմ մեր տան ծորակից հոսող ջուրը:

Բ աշակերտ - Ես տեսնում եմ մեր տան կողքով անցնող գետը:

Գ աշակերտ - Ես տեսնում եմ Սևանը, երբ ալիքները բարձրանում են ափի ավազի վրա, հետո հետ են քաշվում:

Քայլ երկրորդ. լսողական (աուդիալ) ընկալման խթանում.

Ուսուցիչ – Ի՞նչ ձայներ ես լսում, երբ ես արտասանում եմ ջուր բառը

: Ա աշակերտ - Ես լսում եմ հոսող ջրի ձայն:

Բ աշակերտ - Ես լսում եմ, թե ինչպես են անձրևի կաթիլները աղմուկով խառնվում գետի ջրերին:

Գ աշակերտ - Ես ալիքների շարժի ձայնն եմ լսում:

Քայլ երրորդ. մարմնական-զգացական (կինեսթետիկ) ընկալման խթանում. Ուսուցիչ – Ի՞նչ ես զգում, երբ լսում ես ջուր բառը:

Ա աշակերտ - Ես ուզում եմ խմել, ուզում եմ ձեռքս պահել թափվող ջրի տակ: Զգում եմ հաճելի սառնություն:

Բ աշակերտ - Ես վախ ու սարսուռ եմ զգում. ես այնպիսի զգացում ունեմ, թե գետն էլի հորդանալու է:

Գ աշակերտ - Ես ոտաբոբիկ լճի ափին կանգնելու ցանկություն եմ ունենում: Ջուրը խփվում է ոտքերիս, հետ քաշվում: Այն շատ սառն է, հաճելի: Ես դողում եմ, բայց չեմ ուզում հետ քաշվել:

Դպրոց մտնելու առաջին օրվանից իրականացվող այսպիսի աշխատանքը զարգացնում է աշակերտի պատկերավոր մտածողությունը, հնարավորություն է տալիս տեսնելու բառի ու հասկացության կապը: Ինչպես նաև երեխային

հնարավորություն է տալիս իմաստավորելու ամեն մի բառի հնչյունական կազմը, լավ լսելու բառի կազմի մեջ մտնող հնչյունները: Նմանատիպ աշխատանքը զարգացնում է երեխայի նաև հնչյունային լսողությունը, որը գրաճանաչության արդյունավետ կազմակերպման գրավականն է:

Բառապաշարի հարստացման ուղղությամբ աշխատանքները սկսվում են նախաայբբենական շրջանում: Ուսուցչի պատմած հեքիաթում, Այբբենարանի նկարներում կարող են հանդիպել այնպիսի պատկերներ, որոնց գրական անուններն աշակերտն առաջին անգամ է լսում (2, էջ 283): Ուսուցիչը այդ նոր բառը հստակ արտասանում է, հետո սովորողներին հարցնում, թե ինչ պատկեր է ծնվում նրանց մտքում, երբ լսում են կամ արտասանում այդ բառը: Աշխատում է լսել գրեթե ողջ սովորողների կամ շատերի մտքերը: Ապա հարցնում է, թե լսո՞ւմ են որևէ այլ

ձայն այդ բառի արտասանության ընթացքում: Տեղեկանում է նաև բառի առաջացրած մարմնական զգացողության մասին. հարցնում է նաև, թե բառն ուրա՞խ է, թե՞ տխուր, վախկո՞տ է, թե՞ քաջ և այլն:

Այս ամենից հետո ուսուցիչն առաջարկում է պատմել բառի մասին ավելի ընդարձակ, նշել, թե ուրիշ ի՞նչ բառերի համակցությամբ կարող է օգտագործել այն: Այսինքն՝ իրենից անկախ երեխան խորամուխ է լինում բառի ներքին պատկերային կողմի մեջ, ընկալում է բառի ու հասկացության կապը, կարողանում է որոշել դրա տեղը կիրառության առումով, նաև զուտ լեզվաբանական տեսանկյունից: Այսպեսով, նա լավ գիտակցում է, որ, ասենք, ըմպանակը առարկա է ցույց տալիս, սպասքի պարագա է, դրանով կարելի է ջուր խմել, դրան կարելի է նաև գավաթ կամ բաժակ ասել: Միևնույն ժամանակ երեխան սկսում է ընկալել, թե նրբիմաստի ինչ տարբերություններ կան գավաթ - բաժակ -ըմպանակ բառերի մեջ, սրանցից ամեն մեկը երբ կարելի է գործածել:

Այս աշխատանքը շարունակվում է նաև գրաճանաչության ուսուցման այբբենական շրջանում. հնչյուն-տառերի ուսուցման ժամանակահատվածում կարող են հանդիպել շատ բառեր, որոնք երեխային անծանոթ են: Դրանք պիտի

հանգամանորեն քննարկվեն վերոհիշյալ մեթոդով:

Նյարդալեզվաբանական ծրագրավորում հոգեբանական ուղղության այս մոտեցումը փոխում է երեխայի պատկերացումը բառի մասին: Այստեղ տեղին է

հիշել ռուս մանկավարժ Մ. Ա. Ռիբնիկովայի ասածը. «Սովորեցե՛ք գրանցել հնչյունները, շարժումները, գույները, բառերը, արտահայտությունները» (8, էջ 257): Այսպես քայլ առ քայլ, յուրաքանչյուր հանդիպող բառի քննության միջոցով կարելի է սովորողներին ընկալելի դարձնել բառի արտահայտած նրբիմաստները ու տարբեր տեքստերում դրանց գործածության յուրահատկությունները:

Ցանկացած գրական ստեղծագործություն, ուսուցանվող կամ ընթերցվող թեմա (3, էջ 70-91) բառապաշարի հարստացման աղբյուր է: Դասարանում ընթերցում են, ապա ուսուցիչը դիմում է աշակերտներին, թե ի՞նչ բառ չհասկացան: Դրանք վերլուծվում և մեկնաբանվում են նյարդալեզվաբանական ծրագրավորման առաջարկած սկզբունքով, բացատրվում են և գրառվում են բառատետրերում: Ավանդաբար նոր ուսուցանվող բառերը ուսուցչի հանձնարարությամբ գործածվում են նախադասությունների կամ խոսքի մեջ: Այս դեպքում հաճախ կարելի է լսել կցկտուր նախադասություններ, իսկ լավագույն դեպքում կրտսեր դպրոցականներն ուղղակի կրկնում են մեկմեկու ասածը: Սակայն նյարդալեզվաբանական ծրագրավորման առաջարկած մեթոդներով աշխատելու դեպքում աշակերտը խոսում է բառի մասին, դա կիրառում է կապակցված խոսքի մեջ, որն ավելին է, քան միայն նախադասություններ կազմելը: Սկզբնական շրջանում ուսուցիչը կարող է նախապես դուրս գրել, բառարանով ճշտել ընթերցանության թեմայի մեջ եղած անծանոթ բառերի բացատրությունները, գրել գրատախտակին, կարող է գրի առնել նաև մեծ պաստառի վրա ու տվյալ թեմայի ուսուցման ողջ ընթացքում պահել սովորողների տեսադաշտում: Ապա ամեն բառի շուրջ հանգամանալից աշխատել՝ խթանելով սովորողների զգայական ընկալմանը:

3. Բառապաշարի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքի մեթոդիկա

Բառապաշարի հարստացման ուղղությամբ՝ տարրական դասարաններում հիմնականում աշխատանք է տարվում մայրենիի դասագրքերում ընդգրկված

բնագրերի վերլուծության ժամանակ:

Բառային աշխատանքի ողջ ուղղությունները տարրական դասարաններում պետք է իրականացնել գործնական ճանապարհով՝ հենվելով մայրենիի

դասագրքերում զետեղված գեղարվեստական բնագրերի վրա՝ առանց տեսական սահմանումներ, տեղեկություններ, քերականական եզրույթներ հաղորդելու: Բառային աշխատանքի քայլերն են.

1.Անծանոթ բառի առանձնացում, իմաստի բացատրում, իմաստավորում: Այս խնդիրներն իրագործվում են ինչպես դասագրքի համապատասխան էջի տողատակում անծանոթ բառի բացատրությունը տալով, այնպես էլ դասանյութի մեթոդական կառույցում դրանց շուրջ տարվող բառակազմական, բառաբարդման, համադրական, վերլուծական, աշխատանքներով: Եթե համակարգված ներկայացնենք, ապա կարելի է շարադրել պրակտիկայում գործածելի՝ բառիմաստի բացատրության հետևյալ հնարները.

ա)բառի բացատրություն՝ առարկան, առարկայի կամ երևույթի նկարը ցույց տալու ճանապարհով.օրինակ՝ ուշ աշուն բառակապակցությունը բացատրվում է՝ ուշ

աշնանային բնությունը պատկերող նկար ցույց տալով

բ)բառի ստուգաբանում, որի ժամանակ բառիմաստը բացատրվում է բառակազմական վերլուծության ճանապարհով.

գ)բառի բացատրություն այլ՝ իմաստով մոտ բառերի օգնությամբ դ)բառի բացատրություն իմաստային մեկնաբանությունների միջոցով. օրինակ՝ հերոս-մարդ — մարդ, որը ողջից տարբերվում է իր քաջ, անվախ արարքներով ե)բառի բացատրություն հականիշների ու հոմանիշների միջոցով զ)բառի բացատրություն նկարելով:

2.Բառակազմական վերլուծություն, որի հիման վրա բացահայտվում է անծանոթ բառի իմաստը: Բառերի բացատրության տվյալ եղանակը բառային աշխատանքի ու ուղղագրության հետ կապեր ստեղծելու հնարավորություն է տալիս, քանի որ այդ դեպքում բացահայտվում են բառերի արմատները՝ նպաստելով դրանց ուղղագրության յուրացմանը:

3.Բառերի համեմատում՝բառակազմական տարբերությունների բացահայտման

նպատակով, որն ստեղծում է նույնարմատ բառերի իմաստների սահմանազատման հնարավորություն (ոսկյա և ոսկեզօծ, արև և արևային, միրգ և մրգեղեն, տուն և տնական և այլն):

4.Բացատրություն կռահման ճանապարհով: ՈՒսուցիչը կարդում է անծանոթ բառ

պարունակող նախադասությունը ու հարցնում, թե ի՞նչ է նշանակում այդ բառը: Մեկ անգամ էլ կարդալով նախադասությունը,նա պահանջում է կռահել բառի իմաստը:

5 Նորածանոթ բառերի բացատրություն տեղեկատվական նյութերի միջոցով, այսինքն՝ բառարաններով, դասագրքի տողատակում կամ հավելվածում տրված բացատրություններում, մանկական հանրագիտարանների հոդվածներով և այլ աղբյուրներից:

6.Առարկայի, մակետի, նկարի,խրտվիլակի կամ գործողության ցուցադրումը կնպաստի սովորողնեևի ճանաչողական ակտիվության զարգացմանը, եթե այդ գործընթացին նրանք մասնակցում են ստեղծագործաբար ու ինքնուրույնաբար: 7.Հականիշ զույգերի ընտրություն.լույս- խավար, հաստ-բարակ և այլն: 8.Մեկնաբանող նկարագրություն. այս հնարը ստեղծում է ազատ զրույցի

հնարավորություն.սովորողներն ինքնուրույն խոսք են կառուցում ու բացատրում բառերի իմաստը:

Տարրական դպրոցի սովորողները, որպես կանոն, դժվարանում են նկարագրությունները վերարտադրելուց: Սակայն նկարագրական խոսքը հարուստ է մակդիրներով, ածականներով, համեմատություններով, որոնք էլ հարստացնում,

գեղեցկացնում են խոսքը: ՈՒսուցիչը պետք է կարևորի նկարագրական խոսք ստեղծելու կարողությունը: Այս նպատակով տրվող առաջադրանքները պետք է ձևակերպել այնպես, որ սովորողները բառերը ոչ միայն պարզապես օգտագործեն խոսքում, այլ իրականացնեն մտավոր որոշ գործողություններ:

3.1 **Ա. Հոմանիշների ու հականիշների ուսուցումը որպես բառպաշարի հարստացման միջոց:** Բառապաշարի հարստացման ուղղությամբ տարվող աշխատանքի մեջ մտնում են նաև հոմանիշների ու հականիշների յուրացման հետ կապված բազմաբնույթ վարժությունները:

Տարրական դասարաններում հոմանիշների մասին նույնպես տեսական գիտելիքներ չեն տրվում: Դրանց ուսուցումն իրականացվում է գործնական ճանապարհով՝ վարժությունների միջոցով: Հոմանիշների ուղղությամբ

իրականացվող վարժությունների համակարգն ըստ Ջուլիետա Գյուլամիրյանի բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

ա)ընթերցվող բնագրում հոմանիշների հայտնաբերում, դրանց նրբերանգների՝ տվյալ բնագրում ունեցած նշանակության բացահայտում

բ) տվյալ բառի հոմանիշների ընտրություն ու նրբերանգների բացատրություն գ) հատուկ վարժություններ հոմանիշների շուրջ դ) հոմանիշների ակտիվացում՝ օգտագործում կապակցված խոսքում ե) խոսքային սխալների ուղղում, բառի փոխարինում ուրիշ՝ տվյալ բնագրին մտքով առավել համապատասխան բառով: [2, էջ 303]

Հականիշներ: Դեռևս նախադպրոցական տարիքից սովորողներն իրենց խոսքում օգտագործում են հականիշներ: Դպրոց հաճախելու առաջին օրվանից մայրենի լեզվի դասերին այս կարողությունը զարգանում է աստիճանաբար: Թեև սովորողները հանդիպում են հականիշների դեռևս գրաճանաչության շրջանում՝ այբբենարանի նյութերն ընթերցելիս, սակայն հականիշների շուրջ տարվող համակարգված աշխատանքն սկսվում է մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի վերլուծությունից, որից հետո կատարվում են նաև հատուկ վարժություններ.

- բնագրում հանդիպած հականիշների ընտրություն,
- հականիշների, ավելի ճշգրիտ՝ հականիշ-զույգերի՝ նախադասության մեջ օգտագործում,
- նախադասության ամբողջացում հականիշներով ,
- բառին համապատասխան հականիշի ընտրություն,
- հականիշի ու հոմանիշների զույգերի կազմում:

3.2 **Բ.Դարձվածքների ու ասացվածքների ուսուցումը որպես բառապաշարի ու խոսքի հարստացման միջոց:** Տարրական դասարանների մայրենիի ծրագրում դարձվածաբանական հատուկ աշխատանքներ ևս նախատեսված չեն: Սակայն մայրենիի դասագրքերի բնագրերում օգտագործված դարձվածքների իմաստներն պետք է անպայման բացատրվեն:

Դասագրքերում զետեղված գեղարվեստական ստեղծագործությունների, ժողովրդական բանահյուսության շուրջ զրույցներ անցկացնելիս անհրաժեշտ է սովորողների ուշադրությունը կենտրոնացնել դարձվածքներով հարուստ խոսքի արտահայտչականության վրա ու խրախուսել նրանց կողմից դարձվածքների կիրառումը: Չնայած այն բանին, որ տարրական դասարանների մայրենիի

դասագրքերում օգտագործվում են բազմաթիվ դարձվածքներ (բանաստեղծություններում, առակներում, հեքիաթներում, առածներում) կրտսեր դպրոցականներն իրենց խոսքում դրանք համեմատաբար քիչ են գործածում: Այնինչ հայտնի է, որ դարձվածքները հարստացնում են խոսքը, ուժեղացնում են նրա տպավորությունը, սրությունն ու մտքի արտահայտչականությունն : Այդ պատճառով էլ պետք է հետևողական աշխատանք տանել, որ սովորողները դարձվածքներն օգտագործեն ոչ միայն կարդացած բնագրերը վերարտադրելիս, այլև ինքնուրույն կառուցած խոսքում:

Սովորողների խոսքի զարգացման գործում ասացվածքները մեծ դեր ունեն: Ասացվածքները մայրենիի դասագրքերում սովորաբար տեղադրվում են ընթերցանության համար նախատեսված նյութերից հետո՝ կապված ստեղծագործության բովանդակության, ենթատեքստի և գաղափարի հետ: Սովորողներն այսպես հասկանում են ասացվածքի միտքը, ավելի ցայտուն են զգում նրա ու ընթերցած ստեղծագործության իմաստի ընդհանրությունը: Ասացվածքն այս դեպքում դառնում է կարծես բնագրի յուրահատուկ, հակիրճ ամփոփում: Դպրոցականները պետք է ոչ միայն հիշեն դասագրքերում եղած ասացվածքները, այլև կարողանան դրանք կապել իրենց կարդացած ուրիշ ստեղծագործություններում արծարծվող բարոյախրատական հիմնահարցերի, իրենց կյանքում տեղի ունեցող իրադարձությունների հետ, բացատրել դրանց այլաբանական իմաստը:

4. Խաղերի դերը սովորողների բառապաշարի հարստացման գործում

4.1Խաղի նշանակությունը

Հայոց լեզվի ուսուցման գործընթացում ուսուցիչը պետք է որոշի ոչ միայն այն, թե ինչպիսի աշխատանք պիտի կատարեն ինքն ու սովորողները, այլև այն մեթոդներն ու հնարները, որոնք արդյունավետ են քերականության ու ուղղագրության ուսուցման գործընթացում: Պետք է կարևորել և՛ դիդակտիկ նյութերի ու լեզվական խաղերի դերը, և՛ այն, թե ինչ չափաբաժնով ու երբ դրանք պետք է օգտագործվեն: Հայոց լեզվի ուսուցման ժամանակ անհրաժեշտ է ուսուցումը հետաքրքրաշարժ, ինքնուրույն, ստեղծագործական, սովորողներին ակտիվացնող հնարներ նախատեսել: *[2, էջ 186]*

Պատմական զարգացման ողջ փուլերում մարդուն ուղեկցել է Խաղը : Այն եղել է ոչ միայն որպես հաճելի զբաղմունք, այլ կյանքի տարբեր հարաբերություններում գործելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորման միջոց: Խաղերն նպաստում են նաև ուսումնական գործընթացի արդյունավետության

բարձրացմանը:

Բոլորին էլ հայտնի է այն, որ խաղը կազմում է ուսումնական գործընթացի անբաժանելի մասը:Խաղն օգնում է բառերի հնչյունային ընկալմանը, հարստացնում երեխայի միտքը նոր տեղեկություններով, իսկ կարևորը՝ զարգացնում աշակերտների բառապաշարն ու խոսքը:

Խաղը դասը դարձնում է հետաքրքիր, աշխատանքային գործընթացի մեջ են ընդգրկում նույնիսկ ծույլ սովորողներին: Խաղային առաջադրանքների օգնությամբ լեզվական գիտելիքները վերածվում են կարողությունների ու զարգացնում սովորողների ստեղծագործական կարողությունները: Խաղի միջոցով ոչ միայն բավարարվում են աշակերտների հիմնական հոգեկան պահանջմունքները, այլև նրանք ձեռք են բերում բարձր ինքնագնահատական և անհրաժեշտ համոզմունքներ :

Խաղի դաստիարակչական-զարգացնող և ուսուցողական գործառույթների հաշվառումը կանխում է ընթացիկ սխալները, հոգեշտկողական ներգործություն ունենում անբարենպաստ պայմաններում մեծացած աշակերտների վրա:[4,էջ 26]

Երբ ցանկացած ուսումնական գործընթացի մեջ ներառվում են խաղային տարրեր, այդ աշխատանքը ավելի արդյունավետ ու տպավորիչ է դառնում, քան միապաղաղ բացատրությունը, որը շատ շուտ դառնում է անհետաքրքիր և հոգնեցուցիչ : Դա ավելի նկատելի է տարրական դասարանների սովորողների շրջանում: Նման աշխատանքները կարելի է մշտապես անցկացնել երեխայի՝ դպրոց ընդունվելու պահից ու շարունակել տարրական դպրոցում, իսկ հետագայում՝ հիմնական ու ավագ դպրոցներում: Այժմ ներկայացնենք մի քանի խաղային առաջադրանքներ, որոնք նպաստում են բառապաշարի հղկմանն ու հարստացմանը: 4.2 Խաղի մեթոդաբանությունը

Բառակապակցությունը փոխարինել մեկ բառով՝

60 րոպե ---- 1ժամ

Քաղցրավենիք շատ սիրող ---- քաղցրակեր

Շատ խոսող ---- շատախոս

Սուտ խոսող ---- ստսխոս:

Խաղ «Ծածկագիր»

Նպատակ.աշխատանք հնչյուններով, վերլուծական, համադրական

կարողությունների զարգացում և տրամաբանական մտածողության ձևավորում և բառապաշարի հարստացում:

Ընթացքը.խաղում են զույգերով, մեկը՝ ծածկագրողի, մյուսը՝ վերծանողի

դերում: Ծածկագրողը մտածում է 4 բառ ու տառերի խառը հերթականությամբ գրում գրատախտակին: Վերծանողը պետք է գտնի տառերի ճիշտ դասավորությունը, կազմի բառը ու այդ բառաշարքից առանձնացնի «ավելորդ» բառը: Օրինակ՝ Հդուկա, կասհան, կչումշ, ույրավարգ (դահուկ, սահնակ, չմուշկ, վարագույր): Նման խաղերի նպատակն այն է, որ դրանք նպաստում են լարվածության ու վախի զգացողության անհետացմանը, ստեղծում դրական հուզական մթնոլորտ այն աշակերտների մոտ, որոնք վստահ չեն իրենց ուժերին:

Կրտսեր դպրոցականների մոտ նկատելի են որոշակի խնդիրներ, որոնք կապված են խոսք կառուցելու կարողության հետ: Աշակերտների մի խումբ կարողանում է ժամերով խոսել մի թեմայի շուրջ, սակայն հաճախ դժվար է լինում հասկանալ նրանց խոսացածի տրամաբանությունը: Պատահում է նաև,որ երեխան գիտի, թե ինչ է ուզում ասել, սակայն չունի համապատասխան «ակտիվ» բառապաշար: Այս դեպքում զարգացման հարցում օգնում են խոսքային խաղերը, բառերով խաղ առաջադրանքները: Օրինակ՝

«Անագրամման» զարգացնող խաղ է: Բառը կազմող ողջ տառերի տեղաշարժից ստացված նոր բառը կոչվում է անագրամմա: Օրինակ՝ տաo-պատ, անուշ- աշուն , մուկ- կում, կարապ- կապար, գազ- ազգ և այլն:

Այս խաղը հնարավորություն է տալիս ներթափանցելու լինելու բառի կազմության մեջ:

Բառիմաստի ամրապնդման շուրջ տարվող աշխատանքների ժամանակ տեղին կլինի գործածել տարբեր բառային առաջադրանքներ: Օրինակ՝ Բացատրել, թե ում են այդպես անվանում.

Կոշկակար- կոշիկ կարող,

Վարորդ- մեքենա վարող,

Դեղագործ- դեղորայք պատրաստող:

«Ո՞վ եմ ես» խաղը կարելի է խաղալ 3-րդ դասարանից սկսած: Խաղացողները հնարավորություն են ստանում նկարագրել իրենք իրենց, կարդալ դասընկերոջ նկարագիրը և բառապաշարը հարստացնել նկարագրական բառերով:

Սովորողներից յուրաքանչյուրը թղթի վրա 5-6 նախադասությամբ ներկայացնում է իրեն ու վերջում հարցնում՝ «Ո՞վ եմ ես»: Այնուհետև

աշակերտները թուղթը ծալած վիճակում գցում են նախապես պատրաստած տուփի մեջ, ուսուցիչը տուփը մոտեցնում է սովորողներից յուրաքանչյուրին, ու նա բարձրաձայն ընթերցում է բնագիրը: Ամբողջ դասարանը փորձում է կռահել, թե ու՞մ մասին է խոսքը: Գուշակելու դեպքում ընթերցվում է հաջորդ բնութագիրը ու այդպես մինչև վերջինը [9, էջ 138]:

Խոսող առարկաներ: Խաղի միջոցով աշակերտները անսովոր եղանակով ծանոթանում են իրենց շրջապատող առարկաներին:

Սովորողներից պահանջվում է պատկերացնել, թե այս կամ այն իրը խոսելու հնարավորություն ստանալու դեպքում ի՞նչ Կխոսեր: Օրինակ՝ ֆուտբոլի գնդակը կասեր՝ «Ե՛կ միասին խաղանք, չէ որ ինձանով խաղալով մարզվում ես»: Գիրքն անհամբեր սպասում է, որ ասի «Կարդա՛ ինձ, ու դու շատ ու շատ հետաքրքիր տեղեկություններ կստանաս իմ օգնությամբ»[9, էջ130]:

Խաղերով կարելի է կազմակերպել նաև հոմանիշների ուսուցումը: Աշակերտները կանգնում են շրջանով, ամեն մեկի կրծքին փակցված է լինում մի քարտ, որի վրա բառ է գրված: Աշակերտները երաժշտության ուղեկցությամբ պտտվում են, կարող են նաև պարել ու հայացքով փնտրում են իրենց ընկերոջը, այսինքն՝նրան, ում կրծքին փակցված է բառի հոմանիշը: Երաժշտության դադարի հետ հոմանիշ

զույգերի տերերը միասին պետք է կանգնեն շրջանի կենտրոնում, իսկ մյուս աշակերտները հետևում են, թե արդյո՞ք ճիշտ զույգեր են ընտրվել: Նկարագրված վարժություններն ու խաղերը հարստացնում ու հղկում են սովորողների բառապաշարը, ինչպես նաև ծառայում են բազմակողմանի զարգացման, սոցիալական կարողությունների մշակման գործին:

Եզրակացություն

Ամփոփելով ավարտական աշխատանքում կատարված ուսումնասիրություններն եկել եմ հետևյալ եզրահանգումներին՝

1.Բառապաշարը շատ արագ է արձագանքում հանրային կյանքի գործընթացներին, համալրվում նոր բառերով, կրում իմաստային

փոփոխություններ, դրսևորում է բառակազմության ու բառագործածության աննախադեպ եղանակներ ու կերպեր : Դրանք պայմանավորված են

հասարակական կյանքի զարգացումներին ակտիվ արձագանքելու՝ լեզվի ներքին ունակությամբ: Սակայն բառապաշարի հարստացման գործում բարձր արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է լավ ուսումնասիրել դասագրքերի ընձեռած հնարավորությունները, մշակել վարժությունների ու առաջադրանքների ամբողջական համակարգ, սովորողների նկատմամբ ցուցաբերել անհատական մոտեցում, ապահովել աշխատանքի անհրաժեշտ պայմաններ, որոնք կնպաստեն տարրական դասարաններում բառապաշարի հարստացման ուղղությամբ տարվող գործողություններին:

2.Բառապաշարի հարստացման գործընթացում կարևոր շրջան է համարվում բառի շարահյուսական գործածությունը, որը նպաստում է բառը խոսքում գործածելու կարողությունների ձևավորմանը, ինչը բառը ակտիվ բառապաշար ներմուծելու համար կարևորագույն պայման է:

3.Բառապաշարի հարստացման գործընթացին նպաստող հնարներից ու մեթոդներից բացի, առավել կարևորություն ունեն խաղն ու խաղային առաջադրանքները: Խաղն օգնում է հաղորդակցմանը, ինչպես նաև կարող է նպաստել նոր գիտելիքների ձեռքբերմանը, կուտակված փորձի փոխանցմանը, մտածողության, հիշողության, ուշադրության ձևավորմանը, որոնք էլ դառնում են բառապաշարի հարստացման հիմքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1) Բրուտյան Գ., Փիլիսոփայություն և լեզու, Եր., «Հայաստան», 1972 2) Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., «Զանգակ-97», 2009

3) Գյուլբուդաղյան Ս., Հայոց լեզվի մեթոդիկա, Եր., ԵՀՀ, 1978 4) Սարիբեկյան Ձ.Մանկական ուսումնական հաղորդաշարի դերը երեխայի բառապաշառի հարստացման գործընթացում, հոդված, Եր., ԿԱԻ, 2006 5) Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2008 6) Выготский Л. С, Собрание сочинений, том 2, Мышление и речь, М., Педагогика, 1982.

7) Павлова М. А., Интенсивный курс повышения грамотности с помощью НЛП, ИИП, М., 2000

8) Рыбникова, М., А., Очерки по методике литературного чтения, м., Просвещение, 1985

9) Фопель К., Как научить детей сотрудничать, часть 4, Москва, «Генезис», 1999